

7. Բնակարանային ֆոնդի և այլ նշանակության օբյեկտների (կոմունալ-կենցաղային և արտադրական) ջերմամատակարարում

Բնակչությանը և կոմունալ-կենցաղային կարիքների համար ջերմաէներգիա մատակարարող կազմակերպություններում առկա 270 կաթսայատներից 2003թ. գործել են 17-ը, որից 15-ը՝ Երևան քաղաքում: Ամփոփ ցուցանիշներում չեն ներառվել ջերմարտադրող այն կազմակերպությունների հաշվետվային տվյալները, որոնց արտադրած ջերմային էներգիան ծախսվել է միայն արտադրական կարիքների համար: 17 կաթսայատների համակարգում գործել են 32 կաթսաներ: Աշխատող կաթսայատների գումարային հզորությունը կազմել է 1004 Գկալ/ժ (1 Գկալ=10⁹ կալ): 2003թ. ջեռուցման ժամանակահատվածում բոլոր կաթսայատների կողմից ջերմաէներգիայի արտադրության համար օգտագործվել է 31.6 մլն. խոր. մ գազ, այդ թվում Երևան քաղաքում՝ 23.6 մլն. խոր. մ:

Գործող ջերմային ցանցերի գումարային երկարությունը (երկխողովակային հաշվարկմամբ) կազմել է 847.9 կմ, որի 54.3%-ը կարիք ունի փոխարինման, 29.2%-ը՝ վերանորոգման: Գոլորշու ցանցերի գումարային երկարությունը կազմել է 48.0 կմ:


2003թ. ընթացքում գործող կաթսայատների կողմից արտադրվել է 535.2 հազ. Գկալ ջերմաէներգիա, որից Երևան քաղաքում՝ 372.4 հազ. Գկալ: Ջերմաէներգիայի ընդհանուր կորուստները կազմել են 109.5 հազ. Գկալ կամ 20.5%, Երևան քաղաքում՝ համապատասխանաբար 69.4 հազ. Գկալ և 18.6%:

Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմաէներգիայի քանակը, 2003թ.

	Բոլոր սպառողներին բաց թողնված ջերմաէներգիան, Գկալ	Փաստացի ստացված ջերմաէներգիայի ընդհանուր ծավալից, %		
		բնակչությանը	կոմունալ-կենցաղային օբյեկտներին	արտադրությանը
Ընդամենը	438857	51.1	12.3	36.6
որից՝ ք. Երևան	303030	41.4	13.9	44.7

Հանրապետության 48 քաղաքներից բնակչությանը ջերմային էներգիա մատակարարվել է Երևան, Գյումրի և Հրազդան քաղաքներում:

Քաղաքային համայնքների բնակչությանը տրված ջերմաէներգիայի քանակը, 2003թ. (%-ով ընդհանուրից)



77 բնակարանային ֆոնդը և կոմունալ տնտեսությունը 2003թ.

2003թ. ընթացքում ջեռուցվել է 933 բազմաբնակարան շենք և 555 բնակելի տուն: Հինգ և ավելի հարկանի ջեռուցված շենքերի քանակը կազմել է բազմաբնակարան շենքերի 62.0%-ը: Երևան քաղաքում այդ ցուցանիշը կազմել է 93.5%: Բազմաբնակարան շենքերում ջեռուցված բնակելի մակերեսը կազմել է 1431.9 հազ. քառ. մ, որից 1004.5 հազ. քառ. մ-ը՝ հինգ և ավելի հարկանի շենքերում:

2003թ. հանրապետությունում գործող ջերմարտադրող և ջերմամատակարարող կազմակերպությունների արտադրական կարողությունների միջին տարեկան հաշվեկշռային արժեքը կազմել է 478.5 մլն. դրամ: Ընդհանուր մուտքերը կազմել են 2952.5 մլն. դրամ, այդ թվում 300.0 մլն. դրամը՝ բյուջեից, 2642.7 մլն. դրամը՝ ջերմատներգիայի իրացումից, 9.8 մլն. դրամը՝ այլ մուտքեր: Ջերմատներգիայի իրացումից ստացված մուտքերի 11.1%-ը բնակչությունից է:

Ծախսերի ընդհանուր գումարը կազմել է 2000.9 մլն. դրամ: Ըստ ծախսումների առանձին հոդվածների, ծախսերի պատկերը հետևյալն է. 81.6%-ը նյութական ծախսերն են, ոչ նյութական ծառայությունների վճարումները՝ 0.6%-ը, աշխատավարձը և դրան հավասարեցված վճարումները՝ 11.0%-ը, պարտադիր սոցիալական ապահովագրական վճարները՝ 3.3%-ը, մնացածն այլ բնույթի ծախսեր են:

Հանրապետությունում ջերմատներգիայի մատակարարումից տարիների ընթացքում կուտակվել է 17694.6 մլն. դրամի պարտք, որից բնակչությունից՝ 7314.6 մլն. դրամի կամ 41.3%, իսկ 2003թ.՝ 2549.7 մլն. դրամի, որից բնակչությունից՝ 862.5 մլն. դրամի կամ 33.8%:

Տարիների ընթացքում ջերմատներգիայի մատակարարումից կուտակված պարտքերի 64.8%-ը բաժին է ընկել Երևան քաղաքին: 2003թ. այդ ցուցանիշը կազմել է 38.9%:

Բնակարանային ֆոնդի և այլ նշանակության օբյեկտների (կոմունալ-կենցաղային և արտադրական) ջերմամատակարարումը, 1993-2003թթ.

	1993	1994	1995	1996	1997	1998	1999	2000	2001	2002	2003
Հանրապետությունում սպառող-ներից բաց թողնված ջերմատներգիան, հազ. Գկալ	840.5	821.5	1040.0	840.4	965.6	1041.8	794.7	990.3	636.1	443.3	438.8
այդ թվում՝											
բնակչությանը	308.4	363.4	577.7	492.4	474.3	574.5	383.8	515.8	303.2	204.3	224.3
կոմունալ-կենցաղային կարիքների համար	73.7	88.5	89.0	43.2	150.9	53.9	54.5	62.7	52.7	60.3	53.9
արտադրական կարիքների համար	458.4	369.6	373.3	304.8	340.4	413.4	356.4	411.8	280.2	178.7	160.6